Կոտայքի մարզի «Աբովյանի № 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմության ուսուցչուհի՝ Լուսիկ Հայրապետյան

# <<Հայագիտություն>> խմբակի

# V-VI դասարաններ

# Ծրագիր /տարեկան՝ 68 ժամ/

# Շաբաթական 2 ժամ

# 2022-2023 ուս.տարի

## Բացատրագիր

«Հայագիտություն» խմբակի ստեղծման նպատակը պատմական համակարգված գիտելիքների ձևավորումն է: Ծրագրի նպատակն է կրթել և դաստիարակել որպես հայրենասեր, հայրենաճանաչ և ազգային ավանդույթներով ու չափանիշներով ձևավորած անհատ:

**«Հայագիտություն» խմբակի գործունեության նպատակն է.**

- Ճանաչի իր հայրենիքը, հայ ժողովրդի ծագումնաբանությունը, ազգային կենցաղը, խոհանոցը, մշակույթը, տոներ, հայոց եկեղեցու ծեսերը, խորհուրդները, ազգային - եկեղեցական ավանդույթները, հոգևոր սովորույթներ, էպոսը, առասպելներն ու ավանդապատումները
- Հետազոտել հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը:
- Ցույց տալ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը:
- Ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ:
- Զարգացնել քննադատական մտածողությունը, հետազոտել աղբյուրների հետ աշխատելու, քննարկելու, սեփական տեսակետները հիմնավորելու կարողություններն ու հմտությունները:
- Ճանաչողական էքսկուրսիաների միջոցով նպաստել սովորողների ճանաչողական շրջանակների ընդարձակմանը
- Ծանոթանալ մշակութային բազմազանությանը:
- Ձևավորել վերաբերմունք՝ ուղղված սեփական մշակույթի, պատմության ապագայի տեսլականին:
- Ձևավորի ազգային ինքնագիտակցություն:

## «Հայագիտություն» խմբակի ակնկալվող վերջնարդյունքները.

- Նկարագրի իր բնակության վայրը, պետությունը, հայոց հայրենիքը:
- Վերլուծելով հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, տոներն ու ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:
- Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեք:
- Ճանաչի պատմական և մշակութային գործիչներին ու նրանց գործունեությունը:
- Գնահատի քրիստոնեական արժեհամակրգի դրսևորումները տարբեր հասարակություններում:
- Մեկնաբանի էպոսի հերոսների արժեքները և մեկնաբանության հիման վրա ձևավորի հայրենասիրություն:
- Ուսումնասիրելով իր համայնքը՝ հավաքագրի և ամբողջացնի հնագույն քաղաքակրթությունների ձեռքբերումները, որոնք հիմք են հանդիսացել իր համայնքի գործունեության համար:
- Ուսումնասիրի քրիստոնեական ազգային մշակույքը՝ ձևավորի բանիմաց վերաբերմունք առաքինություն արժեհամակարգի վերաբերյալ:
- Քննության ենթարկի տարբեր գաղափարները և նորարարությունները, ստեղծի իր տարբերակը:

# <<Հայագիտություն>> խմբակ

## Տարեկան՝ 68 ժամ

## Շաբաթական 2 ժամ

| Ժամ | Թեմա |
|---|---|
| | **Թեմա 1. Հայկական լեռնաշխարհ: 3 ժամ** |
| 1<br>2<br>3 | Իմ հայրենիքը:<br>Որտեղ եմ ես ապրում, սահմանները, դիրքը:<br>Իմ մարզը, քաղաքը: |
| | **Թեմա 2 Հայոց զարմանահրաշ բնաշխարհը: 7 ժամ** |
| 4 | Մեծ Հայքի 15 նահանգները: |
| 5 | Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթ, ավանդազրույցներ: |
| 6 | ՀՀ ամենաբարձր գագաթները: Քառագագաթ Արագած: |
| 7 | Մայր Արաքս, ավանդազրույցներ: |
| 8 | ՀՀ-ի հանքային ջրերը: |
| 9 | Հայկական լեռնաշխարհի բուսական ու կենդանական աշխարհը : |
| 10 | Առցանց էքսկուրսիա Արենիի հնավայր, Խնձորեսկ, Քարահունջ: |
| | **Թեմա 3 Հայերի ծագումնաբանություն : 2 ժամ** |
| 11 | Հայեր, ծագումնաբանություն: |
| 12 | Ավանդազրույցներ հայ ժողովրդի ծագման մասին : |
| | **Թեմա 4 Անցյալի մշակութային արժեքները: 3 ժամ** |
| 13 | Անցյալի մշակութային արժեքները: |
| 14 | Ավանդապատում: Բնակավայրի մասին ավանդապատում: |
| 15 | Աբովյանն իմ քաղաքը: |
| | **Թեմա 5 Մեր լեզուն 4 ժամ** |
| 16 | Հնդեվրոպական լեզվաընտանիքը և հայերենը: |
| 17 | Հայոց գրեր: Մեսրոպ Մաշտոց |
| 18<br>19 | Հայտնիները հայոց լեզվի մասին: |
| | **Թեմա 6 Մեր կրոնը մեր հավատքը: 3ժամ** |
| 20 | Հայ հեթանոսական հավատքը : Հատիս լեռան ավարդազրույցը: |
| 21 | Քրիստոնեության ընդունումը , պատմական նշանակությունը: Գրգոր Լուսավորիչ: |
| 22 | Առցանց էքսկուրսիա Մայր Աթոռ ս. Էջմիածին: |
| | **Թեմա 7 Եկեղեցական տոներ: 4 ժամ** |
| 23 | Թարգմանչած տոն: Կաթողիկե ս. Էջմիածնի տոն: |
| 24 | Ս. Ծնունդ: Ս. Հարություն: |
| 25 | Ավետման տոն: |
| 26 | Ծաղկազարդ: Համբարձման տոն: |
| | **Թեմա 8 Հայ նշանավոր արքաները: 7 ժամ** |
| 27 | Մենուա և Արգիշտի : Մենուայի ջրանցքը, Էրեբունի բերդ ամրոցը ; |
| 28 | Պարույր Սկայորդի: Նինվեի գրավումը: |
| 29 | Տիգրան Երվանդյան և Աժդահակ: |
| 30 | Արտաշես առաջին և Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը ; |
| 31 | Տիգրան Մեծ և Տիգրանակերտ: |
| 32 | Տրդատ 3-րդ Մեծ և Խոսրով Կոտակ: |
| 33 | Աշոտ Ողորմած և Անիի հիմնադրումը: |
| | **Թեմա 9 Հայոց պետականության վերածնունդը: 8 ժամ** |

| | |
|---|---|
| 34<br>35 | Պետականության ստեղծումը։<br>Արամ Մանուկյան։ |
| 36 | Գործնական աշխատանք։ Հայոց պետականություն։ |
| 37 | Գարեգին Նժդեհ։ |
| 38 | Նժդեհյան պատգամներ։ |
| 39 | Գործնանակն աշխատանք։ Պաստառի պատրաստում։ |
| 40 | Առցանց էքսկուրսիա Սպիտակավոր եկեղեցի։ |
| 41 | «Գարեգին Նժդեհ» ֆիլմի դիտում։ |
| | **Թեմա 10 Հայրենական պատերազմը և հայերը։ 3 ժամ** |
| 42 | Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին։ |
| 43 | Աբովյանցիների մասնակցությունը Հայրենական պատերազմին։ |
| 44 | Այցելություն հուշահամալիր։ |
| | **Թեմա 11 Անկախ Հայաստան։ 2 ժամ** |
| 45 | Անկախության հռչակագրի ընդունումը Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից։ |
| 46 | Հայաստանի Անկախության հանրաքվե։ |
| | **Թեմա 12 Արցախ աշխարհ 4 ժամ** |
| 47 | Արցախի բնաշխարհը։ |
| 48 | Առցանց էքսկուրսիա Արցախ աշխարհում։ |
| 49 | Արցախյան ազատամարտը ; |
| 50 | Արցախի պատմամշակութային կոթողները ։ Գանձասար , Ամարաս։ |
| | **Թեմա 13 Մշակույթը ։ 14 ժամ** |
| 51 | Լուսավորչական նշանավոր կենտրոնները։ |
| 52 | Ոսկեդարյան հայ մշակույթը ։ |
| 53<br>54<br>55 | Հայ պատմիչները ՝ Մ. Խորենացի , Ագաթանգեղոս , Կորյուն , Եղիշե։<br>Առասպելները։<br>Սասնա Ծռեր էպոսը։ |
| 56 | Միջնադարյան գիտության անխոնջ մշակները ՝ Ա. Շիրակացի , Դավիթ Անհաղթ , Մխիթար Գոշ , Մխիթար Հերացի , Ամիրդովլաթ Ամասիացի։ |
| 57 | Գրականությունը ՝ Գրիգոր Նարեկացի , Սայաթ Նովա , Հ. Թումանյան , Ե. Չարենց , Պ. Սևակ։ |
| 58 | Հայ երաժշտական արվեստը ։ Կոմիտաս ։ |
| 59 | Խաչքարային արվեստ ։ Ջուղայի խաչքարերը ։ Խաչքարագործ վարպետներ։ |
| 60 | Անզուգական հայկական ճարտարապետությունը։<br>Ճանաչողական էքսկուրսիա Տաթևի վանական համալիր և Մակարավանք։ |
| 61 | Հայ պարարվեստը ։<br>Ազգագրական պարեր։ |
| 62 | Ինչ է տարազը։ |
| 63<br>64 | Գորգագործական արվեստը։ Հայկական գորգերը։<br>Աշխարհահռչակ վիշապագորգերը։ |
| | **Թեմա 14 Հայոց մայրաքաղաքները 2 ժամ** |
| 65<br>66 | Արմավիր , Վան , Հայկական Կարթագեն ՝ Արտաշատ , Տիգրանակերտ , Երվանդաշատ , Վաղարշապատ , Դվին , Բագարան , Երազգավորս , Կարս , Անի , Երևան |
| | **Թեմա 15 Հայկականը 1 ժամ** |
| 67 | Մասիսը , Արաքս , Երևան , իշխան , որդան կարմիր , ծիրանը, լավաշը, տոլմա, ծիրանափող. . . . |
| 68 | **Աշխատանքների ամփոփում ։ 1 ժամ** |

## Գրականության ցանկ


1. Ժամկոչյան Հ.Գ. և ուր. -Հայ ժողովրդի պատմություն. սկզբից մինչև XVIII դարի վերջը: Երևան 1975:
2. Սիմոնյան Հր. - Հայոց պատմություն: Երևան 2000:
3. Մելքոնյան Աշոտ- Հայոց պատմություն: Երևան «Հայագիտակ» 1998:
4. Ոսկանյան Մ.Ա., Հոգևոր Նժդեհը: Երևան 2008:
5. Մկրտչյան Ս. Ս., Տոներ: Երևան 2010:



Digitally signed by TASHCHYAN ARTUR 2014820899

Date: 2023.09.18 11:14 AMT